Լիա Թևոսյան
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ (ԳԵՆԵԶԻՍԸ), ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացվում է մտավոր սեփականության իրավունքի հասկացությունը, ծագումն ու զարգացումը: Մտավոր սեփականության զարգացման տեսակետից վերլուծվել են ՀՀ-ում մտավոր սեփականության իրավունքի սահմանադրաիրավական կարգավորման փուլերը, զուգահեռներ անցկացնելով՝ ստեղծագործության ազատության հետ: Վերլուծվել են գործող կարգավորումներն ու նախատեսվող զարգացումները:

Հիմնաբառեր. սահմանադրական բարեփոխումներ, մտավոր սեփականություն, ստեղծագործության ազատություն, արդյունաբերական սեփականություն, օրինաչափություններ, իրավական կարգավորում:

Ներածություն

Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների շարքում իր ուրույն տեղն ու նշանակությունն ունի մտավոր սեփականության իրավունքը՝ որպես անձի յուրահատուկ սեփականության իրավունք: Այն այսօրվա համաշխարհայնացվող աշխարհում դինամիկ և արագ զարգացում ապրող իրավունքներից է, որը գնալով ընդլայնվում և ընդգրկում է մարդկային գործունեության նոր ոլորտներ, հատկապես՝ արհեստական բանականության դերի բարձրացման պայմաններում: Այս ամենը, իր հերթին առաջ է քաշում մտավոր սեփականության իրավունքի հայեցակարգա-

յին փոփոխման և սահմանադրաիրավական բարեփոխման անհրաժեշտություն: Հայեցակարգային նոր մոտեցման մշակման համար կարևոր նշանակություն ունի տվյալ իրավունքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու օրինաչափությունների բացահայտումը:

Հոդվածի հիմնական նպատակն է մտավոր սեփականության իրավունքի ընդհանուր և հայրենական զարգացման պատմության համեմատության միջոցով արտածել Հայաստանի Հանրապետությունում ոլորտի զարգացման ընդհանրությունները, առանձնահատկությունները և կարգավորման բացերը:

Մեթոդը և տեսական հիմքը

Մտավոր սեփականության իրավունքի պատմական զարգացումը բացահայտելու համար կիրառվել է պատմականության մեթոդը:

ՀՀ-ում Սահմանադրական բարեփոխումների տարբեր փուլերում սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունները հասկանալու համար կատարվել են Սահմանադրության տարբեր խմբագրությունների իրավահամեմատական վերլուծություններ:

Մտավոր սեփականության հասկացությունը

Մտավոր սեփականությունը (անգլերեն intellectual property) – բացառիկ իրավունքներն է գրական, գեղարվեստական և գիտական ստեղծագործությունների, համակարգչային ծրագրերի, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների և տվյալների բազաների, ինչպես նաև հարակից իրավունքները՝ գյուտերի, արդյունաբերական նմուշների, օգտակար մոդելների, իրավաբանական անձի անհատականացման միջոցների նկատմամբ, որոնք համարժեք են մտավոր գործունեության (ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ, սպասարկման նշաններ) և մտավոր գործունեության այլ արդյունքներին (Тихомирова, Тихомиров, 2005, էջ 370): Այլ կերպ ասած՝ այն մտավոր գործունեության արդյունքների տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև ստեղծագործական գործունեության ու անհատականացման միջոցների արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների կապակցությամբ ծագող իրավահարաբերությունների ամբողջություն է (Барихин, 2010, էջ 289), «մտավոր գործունեության ոչ նյութական արդյունքը, որը մարդկության պատմության մեծ մասում գոյություն չի ունեցել, չնայած նրան, որ եղել են տարբեր օրենքներ և հասկացություններ, որոնք նախորդ ժամանակաշրջանում կազմել են այդ կատեգորիան» (Hunter, 2012, էջ 5):

Մտավոր սեփականությունը վերաբերում է մարդկային մտավոր գործունեության արդյունքում արարված բոլոր ստեղծագործություններին, որոնք բաժանվում են երկու բնագավառների՝ 1) արդյունաբերական սեփա-

կանություն, որի տակ լայն իմաստով հասկացվում է գյուտերի պահպանումը և 2) հեղինակային իրավունք, որի տակ լայն իմաստով հասկացվում է գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանումը (ՄՍԳ) էջ 3): Սակայն, ընդհանուր առմամբ, մայրցամաքային երկրների մեծամասնության օրենսդրություններն օգտագործում են մեկ ամբողջական՝ «Մտավոր սեփականություն» հավաքական հասկացությունը:

Նշվածին հակառակ՝ օրինակ՝ Իսպանիայի Թագավորության սահմանադրությամբ (149-րդ հոդվածի 1-ին կետի ix ենթակետ) հստակ ամրագրված է երկու՝ մտավոր և արդյունաբերական սեփականության օրենսդրություն (The Spanish Constitution, 1978) հասկացությունները: Ըստ որում, ա) արյունաբերական սեփականությունն իրենից ներկայացնում է բացառիկ իրավունքների շարք, որոնք պաշտպանում են նորարարական գործունեությունը (նոր ապրանքներ, գործընթացներ կամ նմուշներ) և առևտրային գործունեությունը՝ շուկայում բացառապես ապրանքների և ծառայությունների նույնականացման միջոցով (ապրանքային նշաններ և ֆիրմային անվանումներ), բ) մտավոր սեփականությունը, որն իրավունքների շարք է և հեղինակների ու այլ սեփականատերերի մոտ ծագում է ստեղծագործությունների և դրանից բխող օգուտների նկատմամբ:

Այսպիսով, չխորանալով մտավոր սեփականության հասկացության վերաբերյալ տեսաբանների կողմից առաջարկվող տարբեր մոտեցումներին՝ առաջարկում ենք հետևյալ բնորոշումը. մտավոր սեփականությունը բացառիկ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն է մտավոր գործունեության արդյունքում արարված ստեղծագործությունների նկատմամբ:

Մտավոր սեփականությունը և ստեղծագործելու ազատությունը

Կարծում ենք, որ մտավոր սեփականության էությունը հասկանալու համար առաջնահերթ պետք է դիտարկել «Ստեղծագործելու ազատություն»-ը՝ որպես մարդու հիմնարար ազատություն ու սահմանադրական կարևորագույն դրույթ, որը հիմք է ծառայում մտավոր սեփականության՝ որպես հավաքական հասկացության (Բարսեղյան, 2002, էջ 8), գոյության և ժամանակակից աշխարհում դինամիկ զարգացումներին համընթաց շարժվելու համար:

«Ստեղծագործության ազատությունը» միջազգային հանրությունն առաջին անգամ ընդգրկեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 27-րդ հոդվածում, համաձայն որի՝

1.յուրաքանչյուր ոք հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունք ունի,

2. յուրաքանչյուր ոք իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք ունի:

«Ստեղծագործության ազատությունը», որպես մարդու բնական վիճակ,

պետականորեն միավորված հասարակության մեջ իրացվում է բնական իրավունքների միջոցով, պետության կողմից ճանաչվելուց և իրավական նորմերում ամրագրվելուց հետո դառնում է նրա (մարդու) սուբյեկտիվ իրավունքը (Այվազյան և ուրիշներ, 2016, էջ 225):

Պետք է ասել, որ վերը նշված Հռչակագիրն անդրադարձ կատարեց մարդու մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, և դրա բարիքներից օգտվելու ու հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունքներին, բայց ոչ մի կերպ անդրադարձ չկատարեց հենց ստեղծագործության ազատությանը, դրա էության մաս կազմող պարտադիր ազատությունը պետությունների կողմից հարգելուն: Մինչդեռ, 1966թ-ին ընդունված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի հոդված 15-ը ոչ միայն նշում էր, որ դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը՝

ա) մասնակցելու մշակութային կյանքին,

բ) օգտվելու գիտական առաջընթացի և դրա կիրառման բարիքներից,

գ) օգտվելու այն բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից, որոնք առաջանում են իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած երկի կապակցությամբ...», այլ նաև դրա 3-րդ հոդվածը անդրադարձ էր կատարում դաշնագրի մասնակից պետությունների գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը հարգելուն պարտավորեցնելուն: Հետևաբար՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում առկա «Ստեղծագործության ազատության» ոչ ամբողջական էությունը լրացվեց «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» դաշնագրի ընդունմամբ:

Վերջինս անդրադարձ էր կատարում մշակութային կյանքին մասնակցելու, գիտական առաջընթացի և դրա կիրառման բարիքներից, բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից օգտվելու և, իհարկե, պետություններին գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը հարգելուն պարտավորեցնելուն:

Մտավոր սեփականության պատմական զարգացումը

Մտավոր սեփականության իրավունքի սաղմերը գալիս են Հին Հունական և Հռոմեական ժամանակներից, ներառյալ՝ Հռոմեական դատարաններին ջանքերը, որոնք ուղղված էին երրորդ անձանց՝ արգելելու կաշառել ստրուկներին, որպեսզի նրանք բացահայտեն իրենց տերերի առևտրային գաղտնիքները, ինչպես նաև հունական խեցեղենը՝ կավով դրոշմված ապրանքային նշաններով (Hunter, 2012, էջ 5): Այնուամենայնիվ, դրանից հետո և միջնադարում մենք մտավոր սեփականության իրավունքի մի քանի օրինակներ ենք գտնում, որը բացատրվում էր նրանով, որ ժամանակաշրջանի քաղաքական ինստիտուտները հարմարեցված էին տարբեր կարիքների:

Ֆեոդալական հասարակարգը չէր ճանաչում մասնավոր սեփականությունը, բացառությամբ այն ունեցվածքների, որոնք սկիզբ էին առնում թագից:

Հունթերը Մտավոր սեփականության զարգացումը բաժանում է երկու փուլի, առաջին փուլը Պրեմոդեռն ժամանակաշրջանն է, այսինքն՝ մինչ լուսավորությունը, երբ կային տարբեր գործողություններ և օրենքներ, որոնք հաճախ մատնանշվում են որպես մտավոր սեփականության համակարգի սկիզբ: Այս հեղինակը երկրորդ փուլը համարում էր «Վաղ ժամանակակից ժամանակաշրջան»-ը, որը սկսվեց Լուսավորությունից հետո ընկած ժամանակահատվածում՝ Վեստֆալիան պետության վերելքով և պետությունների միջև լայնամասշտաբ առևտրի ի հայտ գալով:

Ժամանակակից մտավոր սեփականության տեսությունը համարում է, որ դրա ծագումը պայմանավորված է եղել արտոնագրային համակարգի ի հայտ գալու հետ (XV դար): 1474 թվականին Վենետիկի Հանրապետության սենատը ընդունում է ակտ, որը սկիզբ է դնում մտավոր սեփականությանը, որպիսին մենք գիտենք այսօր (Hunter, 2012, էջ 6): Այդ ակտի խնդիրն էր պաշտպանել հայտնագործությունները և գրքերը:

Չնայած վերը նշվածին, «Մտավոր սեփականություն» արտահայտության առաջացումը սովորաբար կապվում է XVIII դարի ֆրանսիական օրենսդրության հետ, նկատի ունենալով, որ այդ օրենսդրությունն ամրապնդում էր գրական և արդյունաբերական սեփականության հասկացությունները (Բարսեղյան, 2002, էջ 7):

Հետագայում անհրաժեշտություն առաջացավ կարգավորել նաև ոչ նյութական բնույթի, առանձնահատուկ կարգավորում պահանջող հատուկ տեսակի սեփականության իրավունքը (Розенберг, 1979, էջ 42), դրան տալ միջազգային բնույթի իրավական կարգավորում:

XIX դարի սկզբին երկրները իրենց տնտեսական բարեկեցությունը տեսանելի ապագայում առավելագույնին հասցնելու կարիք ունեին և քանի որ մտավոր սեփականությունն ինքնին հասարակության տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման կարևորագույն գործոններից մեկն էր, ինչի մասին վկայակոչվեց նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Կենտրոնակայանի (ք. Ժնև) գմբեթի տակ կատարված գրառման մեջ. «Մարդկային հանճարը արվեստի և գյուտերի բոլոր ստեղծագործությունների աղբյուրն է. Այդ ստեղծագործությունները մարդուն արժանի կյանքի երաշխիքն են: Պետությունը պարտավոր է ապահովել արվեստի և գյուտերի բոլոր տեսակների հուսալի պահպանությունը» (Խաչիկյան, Ներսիսյան, 2008, էջ 4): Անհրաժեշտ էր ստեղծագործության արդյունքների իրավական ձևակերպման և պահպանության ուղղությամբ քայլեր ձեռնարկել, քանի որ «Նոր» տնտեսությունը կախված է գաղափարների և փաստերի առքուվաճառքից, ինչքան էլ ոչ նյութական և վաղանցիկ լինեն դրանք (EXCERPTED FROM 2004, էջ 1) և, բացի այդ, ինչպես ցույց է տալիս պատմությունը, օրինակ՝ տեղեկատվական խոշոր հայտնագործությունները, երկրների տնտեսական աճի վրա սկսում են ազդել միայն մի քանի տասնամյակ հետո:

Մտավոր սեփականության կարևորությունն առաջին անգամ ամրագրվեց՝ արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայում (1883), Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայում (1886): Երկու պայմանագրերն էլ ղեկավարվում էին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) կողմից: Իսկ 1967թ. Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն ստեղծելու մասին կոնվենցիան ընդունելուց հետո միայն ստացան միջազգային կիրառություն (Հարությունյան, Վաղարշյան, 2010, էջ 377):

Այսպիսով՝ աշխարհին հայտնի մտավոր սեփականությունը, որի ներքո զարգացած երկրները, ընդհանուր առմամբ, ճանաչում էին հեղինակային իրավունքը՝ ապրանքային նշանը, առևտրային գաղտնիքը և արտոնագիրը, իրենց իրավական կարգավորումը ստացան ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների սահմանադրություններում: Աստիճանաբար անհրաժեշտություն էր առաջանում պետության կողմից պաշտպանել ոչ միայն հեղինակի պատրաստի գեղարվեստական ստեղծագործությունը, այլ դրա արարման գործընթացը արտաքին ազդեցությունից (Այվազյան, 2007, էջեր 214–215):

Մտավոր սեփականության իրավունքի սահմանադրահիրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում

Մինչև 1995թ–ի Սահմանադրության ընդունումը Հայաստանում մտավոր սեփականության իրավունքը կարգավորվում էր 1978 թվականի ապրիլի 14–ին ընդունված Հայաստանի Խորհրդային Հանրապետության Սահմանադրության 6–րդ գլխի (նվիրված էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներին, ազատություններին և պարտականություններին) 45–րդ հոդվածով: Դեռևս խորհրդային Հայաստանում այն ժամանակ հռչակված էր, որ. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, կոմունիստական շինարարության նպատակներին համապատասխան, երաշխավորվում է գիտական, տեխնիկական և գեղարվեստական ստեղծագործության ազատություն: Դա ապահովվում էր գիտական հետազոտությունների, գյուտարարական և ռացիոնալիզատորական գործունեության լայն ծավալմամբ. գրականության և արվեստի զարգացմամբ: Ըստ այդ հոդվածի՝ պետությունը ստեղծում է դրա համար անհրաժեշտ նյութական պայմաններ, աջակցում է կամավոր ընկերություններին և ստեղծագործական միություններին, կազմակերպում է գյուտերի և ռացիոնալիզատորական առաջարկությունների ներդրումը ժողովրդական տնտեսության մեջ և կյանքի մյուս ոլորտներում: Նշված էր, որ հեղինակների, գյուտարարների և ռացիոնալիզատորների իրավունքները պաշտպանվում են պետության կողմից»: Այսպիսով, հոդվածի առաջին պարբերությամբ պետության կողմից երաշխավորվում էր կոմունիստական շինարարության նպատակներին համապատասխան գիտական, տեխնիկական և

գեղարվեստական ստեղծագործության ազատությունը, որն ամենևին էլ չէր համապատասխանում ստեղծագործության ազատության էությանը: Եվ, բացի այդ, նշված ազատությունը նախատեսվում էր միայն իր քաղաքացիների համար: Իսկ ահա երկրորդ պարբերությամբ նշվում էր, որ պետությունը պաշտպանում է հեղինակների, գյուտարարների և ռացիոնալիզատորների (արտադրության և արտադրական պրոցեսների ռացիոնալացման գործով զբաղվող մարդու, բանվորի, մասնագետի (Աղայան, 1976, էջ 1259) իրավունքները:

Վերը նշված հոդվածում առկա և պետության կողմից երաշխավորված գիտական, տեխնիկական և գեղարվեստական ստեղծագործության ազատությունը խոսում էր ակունքներից կտրված, ստեղծագործության ազատության էությանը չհամապատասխանող ազատության մասին:

Հայաստանում անկախության գործընթացն ու սահմանադրական կարգերի վերափոխումները 1978թ. Սահմանադրությունը անհամատեղելի դարձրին նոր հասարակական և պետական կարգերի հետ, որովհետև նրա հիմքում դրված էր սոցիալիստական տիպի պետության հասարակարգը (Վաղարշյան, 2003, էջ 80): Անհրաժեշտ էր, որպեսզի, նոր սահմանադրությունն իր մեջ ամրագրեր կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջությունից բխող նպատակներ ու հասարակության կեցության սկզբունքներ (Հարությունյան, 2016, էջ 22): Եվ քանի որ սահմանադրությունը ոչ միայն պետության հիմնական օրենքն է, այլ նաև քաղաքացիական հասարակության գերագույն իրավական փատաթուղթը (Հարությունյան, Դանիելյան, Ավագյան, Միրումյան, 2016, էջ 217), 1995թ-ին երկարատև խորհրդարանական քննարկումներից հետո հանրաքվեի է դրվում անկախ Հայաստանի Սահմանադրությունը (ընդունված 1995, հուլիսի 5-ին), որը հենված լինելով սահմանադրական տեսության նվաճումների վրա, ըստ իրավական կարևորության, 2-րդ գլուխը նվիրում էր՝ «Մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին»: Նոր ընդունված Սահմանադրության 2-րդ գլխի 36-րդ հոդվածի առաջին պարբերությունը ամրագրում էր, որ՝

«Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք»: Իսկ Երկրորդ պարբերությունը վերաբերում էր մտավոր սեփականությանը, համաձայն որի. «Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»:

Սահմանադրության նշված հոդվածի առաջին մասով փորձ կատարվեց ամրագրել մարդու ստեղծագործելու ազատությունը, որպես անձի, հասարակության և պետության համար առավել կենսական նշանակություն ունեցող դրույթ՝ ուղղված մարդու հոգևոր, նյութական կարիքների բավարարմանը: Հոդվածի երկրորդ մասն իր իմպերատիվ (հրամայական) բնույթով վերաբերում էր մարդու ստեղծագործության ազատության արդյունքի պաշտպանությանը՝ Մտավոր սեփականությանը:

Այնուամենայնիվ, վերը նշված սահմանադրական դրույթն ամբողջապես չէր արտահայտում մարդու ստեղծագործելու ազատությունն ու դրա էությունը: Այն միայն անդրադառնում էր յուրաքանչյուրի կողմից գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքին:

Ինչպես իրավացիորեն նշում է Գ. Տ. Պետրոսյանը՝ «ոչ լրիվ իրավական կարգավորումը» կարող է հետևանք լինել ոչ միայն հասարակական հարաբերությունների ոչ լրիվ կարգավորման, այլ նաև նորմատիվ դրույթների բովանդակության անորոշության կամ անկատարության (Պետրոսյան, 2019, էջ 37):

Եվ իրականում՝ 1995թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածն իր բովանդակության անորոշության և անկատարության հետևանքով հանգեցրել էր հասարակական հարաբերությունների ոչ լրիվ կարգավորման:

Այդուամենայնիվ, ՀՀ 2005թ. խմբագրությամբ սահմանադրական բարեփոխումների արդյունքում ստացվեց այնպես, որ օրենսդիրը մարդու ստեղծագործության ազատության սահմանադրական նորմի բարեփոխման տեսակետից մի անհաջող փորձ կատարեց: Այս անգամ Սահմանադրության Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների 2-րդ գլխի ներքո 31-րդ հոդվածի 4-րդ կետում նշվեց, որ. «Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»:

Այսպիսով, մեկ պարբերությամբ Սահմանադրությունը անդրադարձ կատարեց բացառապես ստեղծագործության ազատության արդյունք հանդիսացող մտավոր սեփականության պաշտպանությանը, բայց ոչ մարդու հիմնարար ազատություն համարվող ստեղծագործության ազատությանը, դրա էությանն ու բովանդակությանը:

Մեր կարծիքով՝ 2005թ-ի սահմանադրական փոփոխություններում օրենսդիրը մարդու «Ստեղծագործության ազատության» նորմատիվ դրույթի վերաբերյալ դարձյալ թույլ էր տվել իրավաստեղծման տեխնիկայի տրամաբանական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել էր սահմանադրական կարևորագույն նորմի բացի: Բացի այն, որ սահմանադրական բարեփոխումները ոչ դրական արդյունք ունեցան ստեղծագործության ազատության ամրագրման ուղղությամբ, ի տարբերություն նախկին սահմանադրության, այստեղ արդեն բացակայում էր նաև «Գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք» նախադասությունը:

Այսպիսով, բացի այն, որ «Ստեղծագործության ազատությունը» որպես ազատություն առանձին հոդվածով չէր նախատեսվել, այլև շեշտադրումը կատարվել էր արդյունքի՝ որպես առանձնահատուկ կարգավորում պահանջող հատուկ տեսակի (Հարությունյան, Վաղարշյան, 2010, էջ 377) սեփականության պաշտպանության վրա միայն:

Ստացվեց այնպես, որ սահմանադրական բարեփոխումները «Ստեղծագործության ազատությունը» բարենորոգելու փոխարեն այն առավել հեռացրեց արմատներից, որը, կարծում ենք, խոսում էր իրավունքի բացի մասին, քանի որ այստեղ կոնկրետ նորմը չէր համապատասխանում պետական կարգավորիչ գործունեության համապատասխան մակարդակին և օրինաչափություններին և փաստորեն նշված նորմի արմատական վերանայման կարիք առաջացավ:

Եվրոպական իրավական միտքը փաստում է, որ գլոբալացվող աշխարհում սահմանադրությունը ոչ այնքան պետության հիմնական օրենքն է, որքան քաղաքացիական հասարակության գերագույն իրավական փաստաթուղթը (Հարությունյան, խմբ. Դանիելյան, Ավագյան, Միրումյան, 2016, էջ 217):

Ստեղծագործության ազատության, մտավոր սեփականության իրավունքների ամբողջական իրավական ձևակերպումները ժամանակաշրջանին համապատասխան կհանգեցնեն գիտության, մշակույթի ու նորարարությունների կայուն զարգացմանը՝ ապահովելով կայուն նախադրյալներ հեղինակների և նորարարների մտավոր արժեքներ ստեղծելու համար:

2014-2015թթ-ին Հայաստանում նախատեսվում էր նոր սահմանադրական փոփոխություններ, որոնք ուղղված էին լինելու նաև Մարդու իրավունքների երաշխավորմանը, ապահովմանն ու պաշտպանությանը, դրանք էապես բավարարելուն ու որակապես նոր մակարդակի բարձրացնելուն, իրավունքի գերակայությունը երաշխավորելուն, մարդակենտրոն սահմանադրական համակարգ ունենալուն (Հարությունյան, 2016, էջ 201): Եվ քանի որ 2005թ-ի սահմանադրական փոփոխությունները անհրաժեշտ նախադրյալներ չէին ապահովել մարդու իրավունքների անմիջական գործողությունը երաշխավորելու համար, 2015թ-ի սահմանադրական բարեփոխումները մի շարք նորմերի փոփոխությունների կամ լրացումների շարքում ընդգրկեց նաև սահմանադրական ազատություն համարվող մարդու «Ստեղծագործության ազատությունը»:

Կարծում ենք, որ նշված փոփոխությունները պայմանավորված էին հետևյալով. ՀՀ-ն նախատեսում էր տնտեսությունը բարելավել, ստեղծագործական և ներդրումային բարենպաստ միջավայր ստեղծել, այդ թվում և Եվրամիության, և Հայաստանի Հանրապետության միջև «Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի» (ԽՀԱԱՀ) ստորագրման գործընթացը հեշտացնել և այդ ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվեց Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարություն:

Այսպիսով, ապագայի մի շարք մարտահրավերներ հաշվի առնելով, մտավոր սեփականության ոլորտում 2015թ-ին բացը լրացնելու եկավ Սահմանադրության 43-րդ հոդվածը «Ստեղծագործության ազատությունը» վերտառությամբ, համաձայն որի «Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն»: Իսկ «Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»

նախադասությունը թողնվեց նույնությամբ, իր տեղը զբաղեցնելով «Սեփականության իրավունքը» վերտառությամբ հոդվածի (հոդված 60-րդ, կետ 7) ներքո՝ սեփականության ձեռքբերման ձևերի, սեփականության իրավունքի սահմանափակման օրենքով նախատեսված դեպքերի, սեփականության օտարման դեպքերի հետ մեկտեղ:

Սահմանադրական նոր փոփոխությունները հանգեցնում են այն մտքին, որ մտավոր սեփականության իրավունքների տեղը սահմանադրական կարգավորման հարցում պետք է առաջնորդվի հասարակության համար ընդհանուր բարիքի ներդաշնակ համադրման ձեռքբերմամբ՝ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությամբ, այսինքն՝ օրենքի գերակայության ընդհանուր սահմանադրական արժեքների վրա (Алферова, Андреева, Афанасьева, Губин, Листовская, Харитонова, Янковский, Афанасьева, 2018, էջ 18), որից էլ բխում է անհրաժեշտություն, որ բացի սահմանադրությամբ մտավոր սեփականության իրավունքի ամրագրումն ու պաշտպանությունը, նաև նորովի ամրագրվի զարգացում ապրող արդյունաբերական սեփականության իրավունքը, որն իր հերթին առաջ է քաշում մարդու մտավոր սեփականության և արդյունաբերական սեփականության իրավունքների հայեցակարգային փոփոխման և սահմանադրաիրավական բարեփոխման անհրաժեշտություն:

Ասվածը վկայում է, որ համացանցի և ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման շարունակական արագընթաց տեմպի և ազդեցիկ դերի արդյունքում մտավոր սեփականության պահպանման ու վերահսկման գործում սահմանադրություններն էլ պետք է պատրաստ լինեն դիմագրավելու ժամանակի մարտահրավերները:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն աստիճանաբար հասնում է մտավոր սեփականության օբյեկտների և սուբյեկտների վերջնական ճշգրտման, մտավոր սեփականության հետ կապված իրավունքների և ազատությունների համապարփակ պաշտպանության ու պահպանության:

Չնայած դրան, նշված բնագավառի օրենսդրությունն դեռևս պարունակում է թերի կարգավորումներ, որոնց կանդրադառնանք հետագա հոդվածներում:

Օգտագործված գրականության ցանկ

ՀՀ Սահմանադրություն 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118:

Այվազյան Ն.Է., Այվազյան Վ.Ն., և ուրիշներ, *Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք,* Գիրք Առաջին: -Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2016:

Այվազյան Վարդան, *Մարդու իրավունքներ և ազատություններ:* Ուս. ձեռնարկ.- Եր.: Տիգրան Մեծ, 2007:

Բարսեղյան Տ.Կ., *Մտավոր սեփականության իրավունք:* -Երևանի պետ.համալս.-Եր.:

Երևանի համալս.հրատ., 2002:
Էդուարդ Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան,* «Հայաստան» Հրատարակչություն, Հատոր 2, Երևան, 1976
Խաչիկյան Անդրանիկ, Ներսիսյան Սուսաննա, *«Մտավոր սեփականություն: Տեսություն և պրակտիկա»* Եր.: Անտարես. 2008:
Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Է. Վաղարշյանի.- Եր.: «Իրավունք», 2010:
Հարությունյան Գ. Գ., *Սահմանադրական մշակույթ.Պատմության դասեր և ժամանակի մարտահրավերները* (խմբ. Գ. Դանիելյան, Ռ. Ավագյան, Կ.Միրումյան).- Վերահրատարակություն՝ (լրամշակումներով)- Եր.: Նժար, 2016:
Հարությունյան Գ., *Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները*, Վերահրատարակություն՝ լրամշակումներով, Երևան, 2016:
Պատկերացում հեղինակային իրավունքի մասին: Գրքույկ: Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍԳ):
Պետրոսյան Գ. Տ., *Բացերն իրավունքում և օրենսդրության մեջ (պատմատեսական և գիտագործնական վերլուծություն)*, Երևան 2019
Վաղարշյան Է. Գ., *Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր*- ԵՊՀ, Երևանի պետական համալսարան հրատարակչություն, 2003:
Барихин А. Б. *Большая юридическая энциклопедия. (Серия «Профессиональные справочники и энциклопедии»)* – М.: Книжный мир, 2010.
Тихомирова Л. В._ Тихомиров М.Ю. – *Юридическая энциклопедия*, 2005.
Е.В. Алферова – канд. юрид. наук; Г.Н. Андреева – канд. юрид. наук; Е.Г. Афанасьева – канд. юрид. наук (отв. ред.); Е.П. Губин – д-р юрид. наук, профессор; В.Н. Листовская; Ю.С. Харитонова – д-р юрид. наук, профессор; Р.М. Янковский Отв. за выпуск – Е.А. Афанасьева Право будущего: *Интеллектуальная собственность, инновации, Интернет:* Ежегодник. Вып. 1 / РАН. ИНИОН. Центр. социал. науч.-информ. исслед. Отд. правоведения; Каф. предпринимательского права МГУ им. М.В. Ломоносова; Отв. ред. Афанасьева Е.Г. – М., 2018.
Розенберг, Питер Д.*Основы патентного права США* [Текст]: [Перевод] / Общ. ред. и вступ. статья [с. 13-28] В.П. Мозолина. – Москва : Прогресс, 1979.
Daniel Hunter and Dennis Patterson The Oxford Introductions to U.S. Law: *Intellectual property*, 2012.DOI:10.1093/acprof:osobl/9780195340600.001.0001
The Spanish Constitution, Passed by the Cortes Generales in Plenary Meetings of the Congress of Deputies and the Senate held on October 31, 1978. Ratified by the spanish people in the referendum of December 6, 1978.Sanctioned by His Majesty the King before the Cortes on December 27, 1978.
World Intellectual Property Organization, *What is Intellectual Property?*, https://www.wipo.int/edocs/pubdocs/en/intproperty/450/wipo_pub_450.pdf.

References

HH Sahmanadrutyun 2015, (Constitution of the Republic of Armenia) dektemberi 6-I popokhutyunnerov, HHPT 2015.12.21/Hatuk togharkum, Hod. 1118. (In Arm.)
Ayvazyan N. A., Ayvazyan V. N., ev urishner, *Hayastani Hanrapetutyan Sahmanadrakan iravunq*, (Constitutional Law of the Republic of Armenia) Girq arajin:- Yer.: ,,Tigran Metc'' hrat., 2016. (In Arm.)

Ayvazyan Vardan, *Mardu iravunqner ev azatutyunner: (Human rights and freedoms)* Us. Dzernark.– Yer.: Tigran Metc, 2007. (In Arm.)

Barseghyan T.K., *Mtavor sepakanutyan iravunq:*–(Intellectual Property Law) Yerevani pet. hamals.– Yer.: Yerevani pet. hamals. hrat., 2002. (In Arm.)

Eduard Aghayan, *Ardi hayereni bacatrakan bararan*, (Explanatory dictionary of the modern Armenian language) «Hayastan» Hratarakchutyun, Hator 2, Yerevan 1976. (In Arm.)

Khachikyan Andranik, Nersisyan Susanna, *Mtavor sepakanutyun: Tesutyun ev praktika*, (Intellectual Property. Theory and practice) Er.: Antares. 2008. (In Arm.)

Hayastani Hanrapetutyan Sahmanadrutyan meknabanutyunner/ (Comments on the Constitution of the Republic of Armenia) yndhanr khmbagrutyamb՝ G.Harutyunyani, A. Vagharshyani, – Yer.: «Iravunq», 2010. (In Arm.)

Harutyunyan G. G., –Iravabanakan git. Doktor, professor, *Sahmanadrakan mshakuyt. Patmutyan daser ev jamanaki martahravernery* (Constitutional culture – History lessons and the challenges of the time) (khmb. G. Danielyan, R.Avagyan, K. Mirumyan).– Verahrataракchutyun՝ (lramshakumnerov)– Yer. Njar, 2016. (In Arm.)

Harutyunyan G., *Sahmanadrakan mshakuyt. Patmutyan dasery ev jamanaki martahravernery*, (Constitutional culture – History lessons and the challenges of the time)Verahratarakutyun՝ lramshakumnerov, Yerevan, 2016. (In Arm.)

Patkeracum heghinakayin iravunqi masin: (Representation of copyright) Grquyk: Mtavor sepakanutyan hamashkharhayin kazmakerputyun (MSG). (In Arm.)

Petrosyan G. T., *Bacern iravunqum ev orensdrutyan (patmatntesakan ev gitagortcnakan verlutysutyun),* (Gaps in the law and legislation (historiographical and scientific–practical analysis)) Yerevan 2019. (In Arm.)

Vagharshyan A.G., *Hayastani sahmanadrakan zargacman vorosh himnaharcer*– (Some issues of Armenia's constitutional development) EPH, Erevani petakan hamalsaran hratarakchutyun, 2003. (In Arm.)

Barikhin A. B. *Bolshaya yuridicheskaya enciklopediya.* (Great legal encyclopedia) (Seriya ,,Professionalnie spravochniki i enciklopedii'') – M.: Knijniy mir, 2010.(In Russ.)

Tikhomirova L. V._ Tikhmirov M. Yu. – *Yuridicheskaya enciklopediya* (Legal encyclopedia) 2005.(In Russ.)

E. V. Alferova– kand.yurid. nauk; G.N. Andreeva – kand.yurid.nauk; E.G. Afanaseva–kand. yurid.nauk (otv. red.); E.P. Gubin – d–r yurid. nauk, professor; W.N. Listowskaya; Yu.S. Khoritonova – d–r yurid. nauk, professor; R.M. Yankovskiy Otv. Za vipusk – E.A. Afanaseva Pravo budushego: *Intellektualnaya sobstvennost, inovacii, Internet:* (Law of the future. Intellectual property, innovation, Internet) Yejegodnik. Vip. 1 / RAN. INION. Centr. Social.nauch.–inform. Iccled. Otd. Pravovedeniya; Kaf. Predprinimatelskogo prava MGU im. M. V. Lomonosova; Otv. Red. Afanaseva E. G. – M., 2018. (In Russ.)

Rozenberg, Piter D. *Osnovi patentnogo prava SSHA* [Tekst] : (The basics Patent Law of USA) [Perevod] / Obsh. Red. I vstup. Statya [s. 13–28] V. P. Mozolina. – Moskva : Progress, 1979. (In Russ.)

Daniel Hunter and Dennis Patterson The Oxford Introductions to U.S. Law: *Intellectual property*, 2012. DOI:10.1093/acprof:osobl/9780195340600.001.0001 (In Eng.)

The Spanish Constitution, Passed by the Cortes Generales in Plenary Meetings of the Congress of Deputies and the Senate held on October 31, 1978. Ratified by the spanish people in the referendum of December 6, 1978.(In Eng.) Sanctioned by His Majesty the King before the Cortes on December 27, 1978. (In Eng.)

World Intellectual Property Organization, *What is Intellectual Property?*, https://www.wipo.int/edocs/pubdocs/en/intproperty/450/wipo_pub_450.pdf.(In Eng.)

Лия Тевосян
Соискатель юридической кафедры
Международного университета Евразия

ПРОИСХОЖДЕНИЕ (ГЕНЕЗИС), СОДЕРЖАНИЕ И СУЩНОСТЬ КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ И СВОБОД В ОБЛАСТИ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ

В настоящей статье приводится понятие «право интеллектуальной собственности», его происхождение и развитие. С точки зрения развития интеллектуальной собственности проанализированы этапы конституционно-правового регулирования права интеллектуальной собственности в РА, проводя параллели со свободой творчества. Были проанализированы действующие рычаги регулирования и предполагаемое развитие.

Ключевые слова: конституционные реформы, интеллектуальная собственность, свобода творчества, промышленная собственность, закономерность, правовое регулирование.

Lia Tevosyan
PhD student in Law of the Eurasia International University

THE ORIGIN OF CONSTITUTIONAL RIGHTS AND FREEDOM (GENESIS), CONTENT AND ESSENCE IN THE FIELD OF INTELLECTUAL PROPERTY

This article introduces the concept, origin and development of Intellectual Property Law. From the intellectual property development point of view, the stages of the constitutional-legal settlement of Intellectual Property rights in the Republic of Armenia have been analyzed, drawing parallels with the freedom of creation. Also, the current regulations and envisaged developments have been touched upon.

Key words: Intellectual Property, Freedom of work, Industrial Property, legal regulation, regularity, constitutional reform.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. փետրվարի 17-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. մարտի 2-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. մարտի 19-ին: